ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
ARMENIAN TERRITORIAL DEVELOPMENT FUND

15.8.19թ.

No 15/8-678

«ՅԴ ԿԱԴ» ՍՊԸ-ի տնօրեն՝
պրն Վ. Գևորգյանին
«ՍՌՍ - Զվեզդա» տնօրեն՝
պրն Տ.Նահապետյան

Հարգելի պարոն Գևորգյան և պարոն Նահապետյան

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը «ՅԴ ԿԱԴ» ՍՊԸ-ը և «ՍՌՍ -Զվեզդա» կոնսորցիումի հետ **ա.թ. փետրվարի 05-ին** կնքել է պետական գնման «ՀՀ Վայոց Ձոր մարզ Եղեգնաձորի թիվ 5 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգման առանց տանիքի» թիվ ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/77 ծածկագրով պայմանագիրը:

ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/77 պայմանագրի կատարման ժամկետ է սահմանվել **2019թ. հուլիսի 19-ը:**

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ՝

ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/77 պայմանագրով նախատեսված շինարարան աշխատանքները ժամանակին չեն իրականացվել և դրանց որակի և ընթացքի մասին Պատվիրատուի կողմից 29.04.19-ին և 27.05.19-ին ներկայացվել են համապատասխան գրություններ, ինչպես նաև այն, որ

մինչև պայմանագրով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտը իրականացվել է նախատեսված աշխատանքների ընդամենը 17 տոկոսը, որի համար Կապալառուին 11.07.19թ. վճարվել է **4.392.142** դրամ, և

հիմք ընդունելով ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/77 պայմանագրի **3.4** կետի **3.1.4 (բ)** ենթակետի և **6.3** կետի դրույթները կայացվել է որոշում՝.

1. Համարել **05.02.2019թ.** կնքված պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման թիվ ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/77 պայմանագիրը լուծված.
2. Սահմանել պայմանագրով նախատեսված տուգանք՝ պայմանագրի ընդհանուր գումարի, այն է, 27.480.000 ՀՀ դրամի 0.5 տոկոսի չափով, որը կազմում է՝ 137.400 ՀՀ դրամ.
3. Տուգանքի գումարը կհաշվանցվի թիվ 1 կատարողական ակտից պահված 231.165 դրամ նրաշխիքային գումարից:

Սույնով, տեղեկացնում ենք Ձեզ նաև, որ, ղեկավարվելով Ձեր կողմից ներկայացված Տուժանքի մասին համաձայնագրի 1.3 կետի դրույթներով, թիվ ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/77 պայմանագիրը ոչ պատշաճ կատարելու համար ՀՏԶՀ-ն մտադիր է, պահանջ ներկայացնել «Ակրա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ-ի՝ 2.748.000 ՀՀ դրամ գումար ստանալու վերաբերյալ:

Գործադիր տնօրեն